**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**
**ՎԵՐԱՀՍԿԻՉ - ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

**01.10. 2022թ.**

# Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**Տեղական ինքնակառավարման մարմինների 2022 թվական սեպտեմբերի 25 –ին մեծամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող Ալագյազ համայնքի ղեկավարի թեկնածուի նախընտրական հիմնադրամում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ նախընտրական հիմնադրամում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքների**

2022 թվականի սեպտեմբերի 25-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցող թեկնածուն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում բացել է նախընտրական հիմնադրամ և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացրել նախընտրական հիմնադրամում կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերը և կնքված պայմանագրերը:

Այն բանկը, որտեղ բացվել է ժամանակավոր հատուկ հաշվեհամարը, սահմանված ժամկետներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացրել են տեղեկանք նախընտրական հիմնադրամի ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ:

Համադրելով բանկից ստացված տեղեկանքները թեկնածուից ստացված հայտարարագրերի, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերի և կնքված պայմանագրերի հետ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը ***փ ա ս տ ու մ է***, որ.

Թեկնածուի կողմից ներկայացված՝ նախընտրական հիմանդրամում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերում խախտումներ չեն հայտնաբերվել և դրանք համապատասխանում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կանոնակարգումներին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի
վերահսկիչ-վերստուգիչ ծառայության պետ՝ **Տ.Բաբիկյան**